14. ԻՇՎԵՆԻ

Կէղի, չէղի ախքատ մարդ մե կէղի, ուրին ավլադ-թավլադ չէ-ղի։ Կէրթան քաղքներ ուրանց տեղ ու տեղրանք կօլորդին, ուրանց տեղ ու տեղրանք չկան։

Խրիշտակ մի կէղի, խնձոր մի կիտա էդա ախքատին, կեսա.

—Առեք, տարեք կերեք, ձեզի իշու մի քուռակ կէղի։

Ընդոնք լէ կեսին.— Թրխ էղի, թրխ օձ մի էղի, պատեր քաշվի։

Ախքատ մարդ կբերա խնձոր, ինք ու ուր կնիկ կուտին, կնիկ կմնա էրկու խոգով։ Ին ամիս, ին սահաթ օր կթմի, կպառկի, կբերի իշու քուռակ մի։

Կտանին կապին թավլեն, դինան թը իշու քուռակ է։ Փել մի կմնա, իշու քուռակ կթիռոշնա (կմեծանա)։

Գելի գիգա տուն, կեսա.— Մարե, թեռ թալ իմ պառեկին, ցան լէ դիր մեջ, բառոշ լէ դիր մեջ, կրակ լէ գիր բառոշի մեջ, ես էր-թամ գետ, իմ գլոխ լվամ։

Կեսա.— Դու իշու քուռակ, խետ քու խալին, գնա կապվի ախոռ, ի՞նչ կէնիս գլխու լվալ։

Էն լէ կլավանգի (կխնդրե), կեսա.— Մարե ջան, մարե, հ՚ելի թեռ թալ իմ պառեկին, ես էրթամ իմ գլոխ լվամ գետ ու իգամ։

Մամն ա, գելի թեռ կթալա պառեկին, ցան կհ՚ըլնա մեջ, բա-ռոշ կգնա մեջ թեռան, կրակ լէ կդրա բառոշի մեջ ու էշ կէրթա գետ։

Կէրթա գետի պռուկ, ուր թեռ ուր պառեկեն գիջու, օճախ կգնա

ուրին, ճուր կտաքցու, ղուր իշվենին կխանա, ու կէղի խորոտիկ խուռնիկ-խրեղեն ախչիկ մի։ Լուս կիտա ընդեխրանք, արեգական փելք կիտա։ Կմտի ճրու մեջ, գլոխ կլվա, ուր ճուր կէղի ծիլ օսկի ու կէրթա։ Ուր գլոխ կլվա, կխաղի ուր շորեր, ուր իշվենին կքաշա ուր վրեն, թեռ կթալա պառեկին ու գիգա տուն։

Գիգա, մամ գելի թեռ գիջու, կէրթա թավլեն կկապվի մսուր։

Կմնա փել մե (ժամանակ), կեսա.— Մարե ջան, կէրթամ դետ իմ գլոխ լվամ։

Կեսա.— Գնա, քու ծամեր փետիմ, գնա կապվի ախոռ, դու իշու քուռակ մե, խետ քու հալին ես։

Գելի լավա գրնգի թը.— Ես էրթամ, գլոխ լվամ։

Մամ խաթրեն չելի, գելի ղթեռ կթալա իշու պառեկին, ցան գ'ըլնա մեջ, բառոշ կգրա թեռան մեջ, կրակ կդրա մեջ բառոշին, ու իշու քուռակ կէրթա դետ։

Թագավորի տղեն կտեսի, գողտու կընգի հ'ետև, կէրթա, կեսա. «Ախբը էսա իշու քուռկու տակ քարամաթ կա, ծուխ ընդրա պառեկեն կթալա, էդի կէրթա»։

Տղեն ա, կէրթա գողտու կպաղվտի քուփ մի, կտեսի իշու քուռակ էկավ էնտեխ, զիշվենին խանեց, էղավ ակ ու արեգակ, լուս տվեց էդտեխ, հանեց ուր օճախ դրեց, ղուր կրակ կպուց, բառոշ դնեց վրեն, ճուր լցեց մեջ ու տաքցուց։ Էդա նստավ ուր գլոխ լըվաց, ուր ճուր էղավ ծիլ-ծիլ օսկի ու գնաց։ Իշվենի ախչիկ տաք ճրուց կելնի, մեկ լէ դընգնի պաղ ճուր կլողկնա, ըսես ինչ օր լուսնակ ու արև մեջ դետին։ Կլողկնա, կը պրծի, ղուր շորեր կխագնի, ուր իշվենին կքաշե ուր վրեն, գելի ուր թեռ կթալա ուր պառեկին ու գիգա ուր պապու տուն։

Թագավորի տղեն գընգնի իշու հ'ետև ու գիգա, կեսա. «Կանի աչքիմ, սա՛նք էդ իշու քուռակ կէրթա դո՞ր»։ Կէրթա կաչքա օր էշ գնաց մտավ ախքատ մարդու մի տուն։

Իշու քուռակ կէրթա, մամ ղթեռ գիջու պառեկեն, կէրթա թավլեն կկապվի ախոռ։

Թագավորի տղեն կէրթա տուն, ուր մամուն կեսա.

— Իմն օր կա՝ ֆլան պառվու իշու քուռակն ա, իմն օր չկա՝ ֆլան պառվու իշու քուռակն ա։

Կեսա.— Լաո՛, դու թագավորի տղա իս, դու իմա՞լ կառնիս զէդ իշու քուռակ։ Արի էրթանք, քըզի ունավոր խորոտիկ ախչիկ մի բերիմ։ Հ'որի՞ դու կառնիս իշու քուռակ, իշու քուռակն ի՞նչ ա։

Էն լէ կեսա.— Չէ՛, ես կառնիմ։

Է՜, խրեղեն ա, ախըր տեսեր ա, սիրտ չի փացեր ա։

Մերն ա կեսա.— Քու քեֆն ա, կուզիս կէրթամ կուզիմ, կէրթամ պառվուն կեսիմ, քու քուռակ տուր թագավորի տղին։

Կեսա.— Ա՜յ մարգ, ամոթ ա, իշու քուռակ ի՞նչ ա որ ես տամ թագավորի տղին։

Կեսին.— Քու քուռկու գին ի՞նչ ա։

Կեսա.— Օսկի մի փարա, քուռակ ի՞նչ ա, որ թը էնոր գին ինչ էղնա։

Էն լէ կեսա.— Առ քի տաս օսկի։

— Կիտան տաս օսկի, կառին զքուռակ ու կէրթան։ Կտանին թագավորու տուն ու կկապին զէգ իշու քուռակ մսրի հ՚առեճ։

Թագավորի տղեն կէրթա կռիվ ու մամուն կեսա.

— Մարե՜ ամանաթ իմ քուռիկ քղիկ, որ չթորկիս դուս ելի։ Օրական քասե մի զատ, էրկու խաց, տանիս իմ իշու քուռկուն։ Խարճրկաթ լէ կկարմրցուս ու կտանիս զարկիս իշու պառեկին որ փիր մտնի։

Տղեն կէրթա կռիվ։ Կմնա էրկու օր, էդիկ կէրթա կռիվ, կռիվ կէնա։ Ուրիշ թագավոր ասքար էնեց էկավ օր թը ըդրա ասքար ճարթա։ Հրմալ կճարթա օր տղի ասքար կէղի խոզ ու փոշի։

Իշու քուռակ չէ՞, իմաստուն կէղի ախոռից գելի գիդա տուն, կեսա.

— Մարե, թոր ես էրթամ փողոց իմ պառեկ պըրտիմ փոշուն ու հ իգամ, փըշըմը իմ պառեկ ոըհաթի։

Կեսա.— Հոնցքի, էլիմ քու ծամեր կփեթիմ, դու իշու քուռակ մի խըտ քու հալին իս, գնա ախոռ հ՚ոդի քզի։

Էնի կլավանգի.— Մարե չան, մարե, թոր էրթամ փուղցի մոտ իմ պառեկ պըրտիմ մըշ փոշուն, իգամ։

Կեսա.— Դե, գնա, գնա, շուտ արի, իմ տղեն տեսնա՝ ինձ կսպանա։

Կեսա.— Քու տղեն, մարե շան, էնտեխ չի, էրթամ, շուտ գիգամ, էնիկ գացեր ա կռիվ։

Գելի իշու քուռակ կէրթա փուղցի տակ, ուր իշվենին կխանա, կթռի կելի փոթորիկ ու կէրթա։ Կէրթա էն խրիշտակին որ խնձոր ա տվի ուր պապուն ու մամուն։

Կեսա.— Պապե շան, ծի մի իտաս, ես խեծնիմ էրթամ կռիվ իմ էրկան հիմդատ։

Խալիվոր ուրին կիտա բոզ ծի մի, ծեռք մի խորոտիկ սիվտակ շոր։ Ախչիկ կխագի ուր շորեր, գելի կխեծի ծին, ամրուճախին կբռնա ուր ծեռ ու կէրթա կռիվ։ Կխասնի ուր իրկան։

Էրկու հաղ ուր թևեր հրմլա կժխշա, ղընդոր ասքար կճարթա, կէնա խող ու փոշի։ Կճարթա կպրծի, կեղի փոթորիկ մի, կթռի։

Էրիկն ի, ուր երես խաչ կխանա, կեսա. «Խավատամ, խոստովանիմ քու շատիկ խրաշքին, սրրր Սարգիսն էր էկավ խասավ ընձիկ»։

Էդ Իշվենին կթռի գիգա տուն։ Փուղցի գլոխ գիգա ղուր իշվենի շապիկ կխագի, գիգա տուն։

Կիսուր կեսա իշու քուռկուն.— Քու ծամեր փեթիմ, գու գո՞ր գացիր, անղանցար։

Կեսա.— Մարե շան, ծեն մ'էներ, շներ թափեցին վրր ընձի, հրմալ խեխթեցին օր հաֆթրրեր իմ ու պատեր իմ։ Իմ շան ու շանդակ էրած արունլվա։

Կեսա.— Դե դնա, գնա նստի մսրի հ'առեճ, յիս քի ըսի մ'էրթա, հ'որի՞ գացիր։

Գելի գլնա քասե մի զատ ու էրկու խատ խաց կտանի կգնա իշու քուռկու հ'առեճ։ Խարճրկաթ լէ կկարմրցու կտանա կզարկա իշու պառեկին, օր փիր մտի։

Իշու քուռիկ կնստի մսուրի հ'առեճ, կմնա հարի լուս, կտեսնա օր ուր իրկան ասքար էղան խող ու փոշի։

Գիգա տուն, կեսա.— Մարե շան մարե, էրթամ փըշրմը իշաներու մեշ օլորտիմ, իգամ։

Կեսա.— Քու ծամեր փեթիմ, սովրա՞ր, գնա, նստի քու մսուր։

Շատ կլավանգի կեսրոշ.— Մարե շան, թոր էրթամ, շուտ իգամ։

Գելի կէրթա իշաներու մեշ, ուր իշվենին կխանա, գելի փոթորիկ մի ու կէրթա։ Կէրթա ըն պապու մոտ, կառի ամրուճախին ծեռ, կխեծի բոզ ծին, սիվտակ շորեր կխագի ու կէրթա։

Գիգա ամրուճախին կժխշա, դուշմնի ասքար կէնա խող ու փոշի։

Իրիկն կեսա. «Խավատամ, խոստովանիմ քու շատիկ խրաշքին, էսա սրրր Սարգիսն ա էրկու հաղ կխասնա ընձիկ»։

Իշվենին ի, կճարթա զասքար, կէղի փոթորիկ մի, կթռի ու գիգա։ Գիգա իշվաներու մեշ, զուր իշվենին կխագի ու գիդա տուն։

Կիսուր կկովտի, կեսա.— Գացի՛ր, շո՛ւտ էկիր, հ'որի՞ հանգրցար։

Կեսա.— Մարե ջան, ես գացի իշվաներուն մեշ, իշվանք թափան վրր ընձիկ, կծեցին ու շանդակս էրին արնլվա։

Կեսա.— Աղեկ էղի, չէ՞ օր ես ասի մէրթա, օր իմ տղեն էկավ, ընձի կսպանա։

Գ-ըլնա քասե մի զատ ու էրկու խաց, կառնա կէրթա, կտանի իշու քուռկուն, ղխարճըկաթ լէ կկարմրցու կտանի կզարկա իշու պառեկին օր փիր մտնա։

Կմնա հըմալ հարի լուսուն։ Լուսուն կտեսնի օր էնեցին ասքար, էկան իրկան վրեն, էնեցին օր թը ուր իրկու ասքար էնին խոզ ու փոշի։ Իշվենին կեսա. «Աստված, իմ կիսուր ինձ թորկեր էրթենք խասնիք իմ էրկան ասքրին էսօր լէ պրծուցեք»։

Գիգա կեսա.— Մարե ջան, էսօր, էսօր ա, էլ չէրթամ, թոր էրթամ ճաղցի դուռ փըշըմը կանաչ-մանաչ կրծիմ ու իգամ։

Կեսա.— Դե, քու ծամեր փեթիմ, սովրար էրթալ. ըսօր իմ տըղեն մայան զիգա, օրթը դու տուն չէղիս, ընձիկ կսպանա։

Կեսա.— Մարե շան, էսօր շուտ գիգամ, չմնամ հարի քու տղի քյախ։

Կլավանգի, կեսուր կեսա.— Դե գնա՛, շուտ արի։

Կէրթա ճաղցի դուռ իշվենին կխանա, կէրթա պապու մոտ։ Կխեծի բոզ ծի մի, ծեռք մի սիվտակ մարդագով շոր, ամրուճախին կառի ծեռ ու կէրթա։ Կէրթա կխասի ուր իրկան։ Էրկու հաղ զթուր կժխշա, ասքար կդնա խոզ ու փոշի։

Իդրա մարդն ա կեսա. «Իգա իրեք հաղ սուրբ Սարգիս կխասի ընձիկ, կանի մարդմ լէ ես սպանիմ»։ Զուր ծին կքշա, կքշա թուր կթալա։ Թուր կքիսի կնկան, ինա բլագ կկտրի։ Կբերա ուր դաստմալ կկասա բլագին, կեսա. «Իդա իրեք հաղ սուրբ Սարդիս կխասի ընձիկ, ես զարկի ընգրա բիլագ լէ կտրեցի, վայ ես քոռնենք, էս ի՞նչ բան էղավ»։ Սուրբ Սարգիսին կեսա. «Խավատամ, խոստովանիմ քու շատիկ խրաշքին»։

Կնիկ դընգի իրկա ասքրի հ՝առեճ, կբերի կմոտեցու գեղին։

Ըդ տեխ կէղի փոթորիկ մի, կթռի գիգա ճաղցի դուռ, կխագի զուր իշվենին, գիգա տուն։

Կեսուր կեսա,— Քու ծամեր փեթիմ, դո՞ր գացիր անգցար։

Կեսա.— Մարե շան ծեն մէնի, ես գացի բըզեզներ ընձի հըմալ կծած օր իմ ջանդակ էզե արընլվա։

Դեսա.— Աղեկ էղի քզիկ, չէ օր ես քըզիկ ըսի մ՝էրթա։

Կեսա.— Մարե ջան, մարե, թոր էրթամ փըշըմի քու տղի տեխի վրեն նստիմ ոհաթիմ, շատ եմ նեղացե։

Կեսա.— Դե՛, քու ծամեր փեթիմ, դու իշու քուռակ մ՝ես, խեղ քու հալին, էրթաս փըշկլիս իմ տղի տեխաց վրեն, մկա իմ տղեն գիգա խրտ ընձի կկռվի։

Կեսա.— Մարե ջան, շուտ գիգամ, չմնան հարի քու տղի քյախ։

13—1086

Կեսա.— Դե գնա, գնա փրշրմը ռհաթի ու շուտ արի։

Կէրթա վըր տղի տեխաց զիշվենին կհանա, կտկլոզնա ու ծեռներ կպարղա ու կքնի։

Է՞, կեսուր լէ կմոռնա զիշու քուռակ։ Զէն կտեսի օր տղի ասքար գիգա, գիգա կտեսի օր մեր ավլե, իորդե, տեխն թալե, կերակուլ էփե տղին։

Տղեն գիգա կնստի։ Մամ կբերա խաց կիտա տղին։ Տղեն կուտա, կթմմի, տղեն կեսա.

— Մարե՞, իմ իշու քուռակ ի՞մալ ա։

Իշու քուռակ գընկի մոր միտ։

Տղեն կեսա.— Մարե, էս էղավ իրեք հաղ օր սուրբ Սարդիս կխասնի ընձիկ, զարկի օր մարդ մի սպանենք, քիսավ սուրբ Սարգսի ծեռ, իմ դաստմալ կապի վըր ծեռաց, դնաց։

Գելի գիգա քոխ կաչքա օր ընոր ծեռ չէր կտրե, խասի ուրին, կաչքա օր իդրա կնիկն ա օր խասի ուրին հիմդատ ու բրինդար էղեր ա. կտեսի օր լուս տվեր ա հ'օդի մեշ, կփայլի, արև ու լսնակ օր կան՝ մեջ ուր հ'օդին ին։ Կկանչա ուր մեր, կեսա.

— Մարե, արի աչքա իմ իշու քուռակն ա օդա։— Մամ գիգա կտեսնի կշիվարի ու կկանի, կեսա.

— Վո՞յ, լաո, ես քոռնիք, ես դինենք օր ըդմլա բան էր, մեկ մեկ խարճերկաթ լէ կզարկենք ընդրա պառեկին։

Տղեն ու մամ կշիվարին ու կանին իդրա գլոխի վրեն։

Կեսա.— Մարե, իմ իշու քուռակ իսկի ղուս գելե՞ր։

Կեսա.— Լաո՞, իրեք հաղ խափեց զիս, հ'ելավ դուս։

Կեսա.— Էն իրեք հաղ լէ խասավ ընձիկ, ես գիցա թը սուրբ Սարգիսն էր խասավ հիմդատ։— Կեսա, —Զարկի մարդ մի սպանի, քիսավ ընդրա բըլագ կտրեց, իշի՞ս, իդա դաստմալ լէ իմ դաստմա՞լն է, իմ նշան բան է։

Մամն ու տղեն գիմցուն զէդի, կկզին էրկուս լէ ղախչիկ կպաքին։

Ցոթ ծեռք զդհոլ զուռնա, քուսան կբերին, յոթն օր, յոթ գիշեր ուրանց խարսնիս կէնին, կուտին, կխմին, կզարկին կխաղան ու կուրրխնան։

Ինոնք կխասնին ուրանց մուրազին, դու լէ խասնինս քու մուրազին։

Էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ անկանչ էրողին։